ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ օգոստոսի 24-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Գորայք համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 9 քաղաքացի:

Քաղաքացիները դիմել էին աշխատանքի տեղավորման երկու, դրամական օգնություն ստանալու, զորահավաքից ազատելու միջնորդության, աշնանացանի համար սերմացու և վառելիք տրամադրելու, հողի օգտագործման նշանակությունը փոխելու, համայնքին երաշտի հասցրած վնասի, դպրոցի ջեռուցման և պատուհանները փոխելու, փոխհատուցում ստանալու հարցերով:

Դրամական օգնության դիմումին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում, մարզպետի հանձնարարությամբ, ուսումնասիրվում են զորահավաքից ազատելու, աշնանացանի համար սերմացու և վառելիք տրամադրելու, հողի օգտագործման նշանակությունը փոխելու, համայնքին երաշտի հասցրած վնասի, դպրոցի ջեռուցման և պատուհանները փոխելու, փոխհատուցում ստանալու վերաբերյալ դիմումները: